

ԿՐՕՆԸ ԿԱՆ-ԲԸՐՈՅՈՒԿԱՆ

ԵՍ ԵՄ ԿԵԱՆՔ

Ա. Լ. Կ. Յոսֆան. Ժ. Գ. Ե.

Ո՞րտեղ է ճշմարիտ կեանքը: Սրգեօք նա այն թէ հանդերձեալ աշխարհումն է: Սրգեօք երկրային կեանքը սկիզբն է ճշմարիտ կեանքի թէ երկինքը դրախտով հանդերձ միայն մի ստուեր է երկրային իրականութեան: Սրգեօք այստեղ թէ հանդերձեալումն ենք կէս էակ:

Հին յայնքը ողբում էին նրանց, որոնք ստուերի թագաւորութիւնը պիտի իջնէին: Հոմերոսի բանաստեղծութեանց մէջ մի կենդանի տեղ կայ, որտեղ Ոգիսեսը դնում ստուերների սահմանն է հասնում — և անկենդան անտրիւն դոյութեան ամբողջ գծրախտութիւնը իւր առաջ է տեսնում: Նոյնպէս հրաշալի է Եսայի մարգարէի այն կտորը, որտեղ Բաբելոնացւոյ թագաւորը մեռնում է (Ես. 14) և ստորերկիրը շարժւում է, որովհետեւ նա էլ ստուերի է փոխակերպւում: Վերեւում ուրախանում է ճնշուածների աշխարհը, որ վերջապէս նրանք նրա առաջ հանգիստ ունին, նոյն խի Լիբանանի եղևնիները ցնծում են: «Այժմ, այլ ևս ոչ ոք չի իջնի, մեղ կտրելու համար»: Ներքե սակայն ստուերները հալածւում են, երկրի բոլոր կառավարիչները կանգնում են իրանց դահերից փախճանուած թագաւորների վերայ և նրանք բոլորը խօսում են նրա հետ. դու էլ թուլացել ես, ինչպէս մենք, ստորերկրում քո հպարտութիւնդ խորտակուեց, քնարերգուներիդ սոսափիւնը դադարեց և որոնք քեզ էին նայում, նախում են այժմ լարուած և մտածկոտութեամբ: «Սրգեօք սա այն մարդն է, որ աշխարհը սասանեցրեց, որ աշխարհը առապատին հաւատարեցրեց և նրանց քաղաքները աւերեց»: Վերջը բոլորովին ուրիշ մտքով է հանդերձեալ կեանքը

փառաբանուել քան միայն ճշմարիտ կեանքը: Միայն այն-
տեղ է ճշմարտութիւնը, երկիրը ստուերի թաղաւորու-
թիւն է, ողբի հովիտ, այստեղ մարդ միայն մեռնում է,
բայց երկնքում կենդանի է մնում: Պօղոսն ինքը ամենա-
զօրեղ խօսքերն ունի այստեղի և այնտեղի տարբերու-
թեան մասին, պէտք է ցանուի ապականացուն և յարու-
թիւն առնի անապականը, պէտք է ցանուի անպատու-
թեան մէջ և յարութիւն առնէ փառքի մէջ, պէտք է
ցանուի թուլութեան մէջ և յարութիւն առնի զօրու-
թեամբ: Միւս առաքեալները ևս նոյն ձևով են մտածում:
Պետրոսը խօսում է անանցանելի, անբիծ, անթաւամ եր-
կնքի ժառանգութեան մասին և Յովհաննէսը երջանկու-
թեան, որտեղ Աստուած նրանց աչքերից արտասուքները
կսրբէ: Ապագան նրանց համար մեծ է և միայն կենդանի:

Ո՞վ է արդեօք իրաւացի: Ո՞րտեղ է ստուերի եր-
կիրը և զրտեղ է կենդանիների երկիրը, ի՞նչ է կեանքը:

Կեանքն ամենուրեք է, որտեղ մարդ Աստուծոյ հետ
միացած է, լինի այդ այստեղ՝ թէ հանդերձեալում: Աս-
տուածանից լքուած լինելը մահ է, մի ներքին ան-
կումն է: Ով յաւիտենական կեանքը իւր մէջ չունի՝ կեն-
դանի չէ: Ով անցողական իրերի հետ է կապուած, ստուե-
րի և ամպերի, նա ինքն իրան ստուեր է դարձնում, ով
անցողական նպատակներ ունի, ինքն էլ անցողական է:
Եթէ Ս. Հոգին չէ առաջնորդում մարդուն, որ Աստուծոյ
է բղխում, նա ամի չի գտնիլ, այնտեղ դուրս գալ կարո-
ղանալու համար: Մի մարդ առանց Աստուծոյ՝ է անկայուն
և թոյլ, մինչև անգամ եթէ բերանը լի լինի համեստ խօս-
քերով: Ոչ թէ խօսքերը, այլ յաւիտենականութեան հետ
հագուոյ շաղկապումն է անում այդ: Իսկ այդ շաղկապումն
ունի Յիսուս Քրիստոս: Նա և Հայրը մէկ են: Նա գոյութեան
նախադրելուն անձանօթ չէ, այլ ուղղակի դնում է երկ-
նային Հօր ճանապարհով: Նա չէ կասկածում, նա չէ տա-
տանում և սայթաքում, նա դիւական զօրութիւն չունի
իւր մէջ և անցողական իրերից կախումն չունի, նրա ամ-
բողջ հոգին այն թաղաւորութեան ընդհանուր ծառայու-

Թեան համար է, որ Աստուած մարդկանց պարգևել է կամենում, Իւր կերակուրն է կատարել Նրա կամքը, որ իրան ուղարկել է: Իւր պարտականութիւնը—Նրա ցանկութիւնը, նոյն իսկ իւր զոհը—Նրա աղատ կամքն է: Նա ոչ մի ճնշում չէ զգում, որովհետեւ ամենայն տեղ Աստուծոյ ձեռքն է զգում: Բոլոր իրերը Նրան ի բարին պիտի ծառայեն, որովհետեւ Նա միայն և միայն Աստուծուն է սիրում: Աստուծոյ մէջ կուում է Նա, Աստուծոյ մէջ—մեռնում, Աստուծոյ մէջ է գտնում՝ յաւիտենական կեանք: Նա երջանիկ է երկրիս վերայ և երջանիկ երկնքումը: Նոյն իսկ դաժան մահը արիւնոտ փայտի վերայ յարատեւ չէ բաժանում Աստուծուց: Մի րոպէ հառաչում է Նա կարիքի մէջ միայնակ տեսնելով իրան, սակայն ապա գտնում է Նա լրացումը—«Հայր, քո ձեռքն եմ աւանդում իմ Հոգին»: Նա մեռնում է, սակայն Նա մեռած չէ, Նա չի կարող ոչնչանալ, որովհետեւ Նա Աստուծոյ Որդին է, և ինչ որ Աստուծուց է ծնւած, այն կյալութի աշխարհին: Նա է կեանքը:

Ֆ. ՆԱՍՈՒՄԱՆԻԿ ԹԱՐԳՄ.

ԱՐՏԱԿ ՎԱՐԳԱԿՆ

